

ՇՈՂԱԿԱԹ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

devrikyan@gmail.com

ORCID iD: 0009-0007-8304-8227

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-577

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅԻ ԿԵՐՊԱՐԻ ՊԱՏԿԵՐՈՒՄՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ ԵՎ ԱՐՏԱՅՈՒԼՈՒՄԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՇԻԴՀԱՐԸ» ԼԵԳԵՆԴՈՒՄ

Բանալի բառեր - Թափառական հրեա, Ահասֆեր, Շիդհար, մանրանկար, փորագրանկար, Գյուստավ Դորե, Մարկ Շագալ:

Ամփոփում

Համաշխարհային արվեստի և գրականության մեջ տարածված պատկերներից ու սյուժեներից է անեծքով մինչև Դատաստան շարունակ քայլելու դատապարտվածի կերպարը: Այս խմբին է պատկանում նաև Թափառական հրեան, որը, Խաչելության ճանապարհին վիրավորելով Քրիստոսին, դատապարտվում է մինչև Երկրորդ զալուստը շարունակ քայլելու: Դարերի ընթացքում այս կերպարը համաշխարհային արվեստում ձևավորել է իր ինքնատիպ և ճանաչելի պատկերագրությունը, որը, ծնունդ առնելով միջնադարյան պարզ կոմպոզիցիայից, աստիճանաբար հարստացել է տարբեր պատկերային դրվագներով և հասել մինչև Գյուստավ Դորեի ու Մարկ Շագալի նկարագարողունների տասնյակ տարբերակներին:

Հոդվածում քննվում և արվեստաբանական վերլուծության են ենթարկվում Թափառական հրեային ներկայացնող մի շարք ստեղծագործություններ, ինչպես նաև ցույց է տրվում, թե Իսահակյանն ինչպես է գրական մշակման ենթարկել այս թեման՝ հայ գրականության մեջ կերտելով Ահասֆերի ավանդական կերպարը:

SHOGHAKAT DEVRIKYAN

Institute of Arts of the NAS RA

devrikyan@gmail.com

ORCID iD: 0009-0007-8304-8227

THE IMAGE OF THE WANDERING JEW IN ART AND ITS REFLECTION IN AVETIK ISAHAKYAN'S LEGEND “SHIDHAR”

Keywords: Wandering Jew, Ahasuerus, Shidhar, miniature, engraving, Gustave Doré, Marc Chagall.

Abstract

Among the widespread motifs in world art and literature is the figure condemned by a curse to walk until the Last Judgment. To this group belongs the Wandering Jew, who, having offended Christ on the way to Golgotha, was doomed to ceaseless wandering until the Second Coming. Over the centuries, this figure developed in world art its distinctive and recognizable iconography, which, originating in the simple compositions of the Middle Ages, gradually became enriched with various pictorial episodes and culminated in the numerous interpretations found in the illustrations of Gustave Doré and Marc Chagall.

The article examines and provides an art-historical analysis of a number of works depicting the Wandering Jew, and also demonstrates how Isahakyan developed this theme in literature, creating the traditional image of Ahasuerus in Armenian literature.

ШОГАКАТ ДЕВРИКЯН

Институт искусств НАН РА

devrikyan@gmail.com

ORCID id: 0009-0007-8304-8227

ОБРАЗ ВЕЧНОГО ЖИДА В ИСКУССТВЕ И ОТРАЖЕНИЕ В ЛЕГЕНДЕ АВЕТИКА ИСААКЯНА «ШИДАР»

Ключевые слова: Вечный жид, Агасфер, Шидар, миниатюра, гра-
вюра, Гюстав Доре, Марк Шагал.

Аннотация

Одним из распространённых в мировом искусстве и литературе образов и сюжетов является фигура, обречённая проклятием идти до Страшного суда. К этой группе относится и Вечный жид, который, оскорбив Христа на пути к Голгофе, был осуждён на вечные скитания вплоть до Второго пришествия. На протяжении веков этот персонаж выработал в мировом искусстве свою самобытную и легко узнаваемую иконографию, которая, зародившись в средневековой простой композиции, постепенно обогатилась разнообразными образными эпизодами и достигла многочисленных интерпретаций в иллюстрациях Гюстава Доре и Марка Шагала.

В статье рассматриваются и подвергаются искусствоведческому анализу ряд произведений, изображающих Вечного жида, а также показывается, как Исаакян литературно обработал данную тему, создав в армянской литературе традиционный образ Агасфера.

Ներածություն

Միջնադարից սկսած մինչև նոր շրջանի գրականություն և արվեստ տարածված է Քրիստոսի խաչելության հետ կապվող և անեծքով հավերժական դեգերումների դատապարտված Թափառական հրեայի կերպարը: Այս լեգենդն ստեղծվել է եվրոպական միջավայրում, և դրա մասին տեղեկություններ չեն հաղորդվում ո՛չ պարականոն և ո՛չ էլ եկեղեցու հայրերի գործերում (Еврейская энциклопедия, 1912: 897):

Թափառական հրեայի լեգենդը դասվում է այսպես կոչված «թափառող սյուժեների» շարքին: Ինչպես ցանկացած բանահյուսական պատում, այս լեգենդը նույնպես ունի բազմաթիվ տարբերակներ, որոնք տարածված են եղել և շրջանառվել են աշխարհի տարբեր վայրերում:

Համաձայն ավանդության՝ նա կոշկակար է եղել և Գողգոթա ելնող Հիսուսին հարվածելու համար դատապարտվել է հավերժական թափառման մինչև Երկրորդ Գալուստը (Еврейская энциклопедия, 1912: 897):

Մեկ այլ խմբագրությամբ՝ Հիսուս Գողգոթա ելնելիս ճանապարհին մի պահ ցանկացել է կանգնել ու հանգստանալ մի տան առջև: Հիշյալ հրեան, սակայն, բացականչել է. «Մի՛ կանգնիր և արա՛գ շարժվիր», ինչին Քրիստոս պատասխանել է. «Ես կզնամ, սակայն դու կքայլես մինչ իմ վերադարձը» (Cohen, 2008: 148):

Նմանօրինակ մեկ այլ տարբերակում էլ նշվում է, որ երբ Քրիստոսին տանում են խաչելու, հրեան հավաքված ժողովրդին ասում է. «Սպասեցե՛ք ինձ, ես գնում եմ նայելու, թե ինչպես են խաչը բարձրացնելու կեղծ մարգարեին»: Քրիստոս շրջվում է և պատասխանում. «Նրանք քեզ չեն սպասի, բայց դու կսպասես ինձ» (Мифы народов мира, 1980: 34):

Մինչև օրս պահպանված ամենավաղ ձեռագրերից մեկը, որում հանդիպում է այս լեգենդը, 1228 թվականին գրել է Ռոջեր վոն Վենդովերը, և այն կոչվում է «Հրեա Հովսեփի մասին, որը դեռ ողջ է և սպասում է Քրիստոսի վերջին գալստյանը» (Roger of Wendover, 1849: 175; Grace, 2018: 46; Anderson, 1965: 18-19): Ասվում է, որ Անգլիայի Սուրբ Ալբանասի աբբայություն է այցելել հայազգի մի արքեպիսկոպոս և պատմել է, թե Հայաստանում հանդիպել է մի հրեա կոշկակար առևտրականի, որը ժամանակին հանդիմանել է Քրիստոսին, բայց հետագայում զղջացել է, մկրտվել և այժմ մենավոր կյանք է վարում (Flores historiarum, 1890: 149):

Տարիներ անց Մատթեոս Փարիզեցին իր «Մեծ Տարեգրություն»¹ (Chronica Majora) ինքնագիր եռահատոր ձեռագրում ներառել է Ռոջեր վոն Վենդովերի այդ հիշատակությունը, իսկ 1252 թվականին Սուրբ Ալբանասի աբբայություն են այցելել նաև այլ հայեր, ովքեր ևս կրկնել են նույն պատմությունը (Matthew Paris, 1880: 340–341):

1602 թ. Գերմանիայում լույս է տեսնում «Համառոտ նկարագրություն և պատմություն մի հրեայի մասին, որի անունն է Ահասֆերուս» (Kurtze Beschreibung und Erzählung von einem Juden mit Namen Ahasverus) գիրքը: Այն միանգամից լայն տարածում է ստանում, և նույն տարում որոշ տարբերություններով լույս են տեսնում այս պատմության ութ տարբեր հրատարակություններ, իսկ մինչև 18-րդ դարի վերջը դրանց թիվը հասնում է քառասունի (Beyer, 2008: 125–40):

Լեգենդի՝ գերմանական ժողովրդական միջավայրում ձևավորված տարբերակում առաջին անգամ այս կերպարին տրվում է Ահասֆեր անվանումը: Գրքում պատմվում է, որ նա պարբերաբար երևում է Գերմանիայի տարբեր վայրերում: Ավելին՝ այնքան իրական է ընկալվել նրա կերպարը, որ մարդիկ անգամ Համբուրգում հարձակում են գործել հրեական թաղամասի վրա՝ պնդելով, թե տեսել են հրեային՝ այդ ուղղությամբ քայլելիս: Գերմանիայում ավանդաբար հավատացել են, որ Թափառական հրեայի կերպարն իրական է, շարունակ շրջում է երկրի տարբեր հատվածներում և միայն Սուրբ Ծննդյան գիշերն է կարողանում դադար առնել ու քնել՝ մի քարի վրա նստած (Мифы народов мира, 1980: 34):

Երբեմնի կոշկակարի կերպարը՝ երկար մազերով և պատառոտված հագուստով, փոխանցվում է հարյուրամյակներից հարյուրամյակ: Ժամանակի ընթացքում Քրիստոսի խաչելությանը հանցակից հրեայի միջնադարյան ընկալումից Թափառական հրեան դառնում է աշխարհի ունայնությունը և փոփոխականությունը հավաստող կերպար: Տարբեր երկրներով ու դարաշրջաններով անցնող Ահասֆերի կերպարը համահունչ էր աշխարհի փոփոխականության հետ

¹ «Մեծ տարեգրություն»-ը («Chronica Majora») ընդարձակ պատմական աշխատություն է, որը ներկայացնում է համաշխարհային պատմությունը՝ Արարչագործությունից մինչև հեղինակի մահվան տարեթիվը՝ 1259 թվականը:

կապված ռոմանտիկների համաշխարհային վշտին և թախիծին (Մկրտումյան, 2017: 238):

Թափառական հրեայի պատկերումն արվեստում

Գրական կերպարի նման աստիճանական փոխակերպումն իր արտահայտությունն է գտնում նաև արվեստում, որում հիշյալ պատմության սյուժետային գծերը ներկայացվում են այլ մեկնաբանմամբ՝ կերպարին հաղորդելով հավերժական և անդադրում թափառողին բնորոշ հատկանիշները:

Քրիստոսի և հրեայի հանդիպումը ներկայացնող ամենից վաղ պատկերները երկու մանրանկարներ են՝ ստեղծված 13-րդ դարում Անգլիայում (Lewis, 1987: 9): Դրանցից առաջինը «Դը Բրեյլսի Ժամագիրքում»² (De Brailles Hours) է (նկ. 1), իսկ երկրորդը՝ վերոհիշյալ Մատթեոս Փարիզեցու «Մեծ Տարեգրություն»-ում (Lampert-Weissig, 2017: 171-202) (նկ. 2):



Հրեայի և Քրիստոսի հանդիպումը Գողգոթայի ճանապարհին

Նկ. 1 «Դը Բրեյլսի
Ժամագիրք», 1240 թ.,
Քրիստանական գրադարան,
ձեռագիր N 49999, թերթ 43 ր

Նկ. 2 «Մեծ Տարեգրություն», 1240–1251 թ.,
Քեմբրիջի Քրիստի քոլեջ, ձեռագիր N 16,
թերթ 74 ր

² «De Brailles Hours»-ը պահպանված ամենից վաղ ժամագիրքն է, որը թվագրվում է մոտավորապես 1240 թվականով: Այն գրել ու պատկերազարդել է Վիլյամ դը Բրեյլսը (Smith, 2012: 1-18):

«Ժամագրքի» մանրանկարը բաժանված է չորս մասի: Վերին ծախ հատվածում Թափառական հրեան է, որը, հավաքվածների ներկայությամբ ծաղրելով և մատը բացասական թափահարելով, արգելում է Հիսուսին կանգ առնել: Ձեռքի նմանատիպ շարժումով է պատկերված նաև Քրիստոս, Որը դատապարտում է նրան հավերժական դեգերման: Այս տեսարանին հակադրվում է հաջորդ՝ մեդալիոնի դրվագը, որում ներկայացված է, թե ինչպես է Սիմոն Կյուրենացին օգնում Քրիստոսին խաչը տանել:

Ստորին ծախ հատվածի պատկերում հանում են Հիսուսի հագուստը, իսկ աջ դրվագում հռոմեացի զինվորները պատրաստվում են Նրան խաչը բարձրացնել: Զինվորներից մեկի ձեռքին մուրճ ու գամեր են, իսկ մյուսը հրում է Քրիստոսին դեպի խաչափայտը:

Կոմպոզիցիոն և պատկերագրական որոշ ընդհանրություններով, սակայն կատարողական այլ մոտեցմամբ է լուծված «Մեծ Տարեգրություն» մանրանկարը: Ձեռագրի մաքուր խորքի վրա տեսնում ենք երկու կերպարներ: Ձախ կողմում կանգնած է հրեան: Նրա ձեռքից դուրս եկող ժապավենին լատիներենից թարգմանաբար գրված է՝ «Հիսու՛ս, ավելի արագ գնա դեպի քո մահը»: Նախորդ պատկերի նման այստեղ ևս նա մատը թափահարելիս է պատկերված: Խաչափայտի ծանրությունից թեքված Քրիստոս պատասխանում է՝ «Ես գնում եմ, բայց դու կսպասես մինչև իմ վերադարձը»:

Չնայած այն փաստին, որ դեռ չեն սկսվել հրեայի դեգերումները, նա այստեղ արդեն պատկերվել է կռացած, ցնցոտիավոր, անխնամ երկար մորուքով ու մազերով:

Ի տարբերություն հաջորդ դարերի ստեղծագործությունների՝ այս երկու պատկերներում շեշտվում է ոչ թե հրեայի թափառումը, այլ նրա դատապարտումը հավերժական սպասման. Քրիստոս հեռանում է, իսկ նա մնում է ընդմիջտ:

1602 թ. լույս է տեսնում «Համառոտ նկարագրություն և պատմություն մի հրեայի մասին, որի անունն է Ահասֆերուս» (Kurtze Beschreibung und Erzählunge von einem Juden mit Namen Ahasuerus) գերմաներեն մի գիրք (Daube, 1955: 243–244), որն սկիզբ է դառնում այս թեմայի տարածման և նոր պատկերների ստեղծման համար:

Միջնադարից եկող ավանդույթով ընդունված էր նկարի կենտրոնական մասում պատկերել գլխավոր կերպարին, իսկ նրա շուրջը՝ որպես պատկերային շրջանակում՝ վերջինիս կյանքի տարբեր դրվագները:

Պատկերագրական նույն սկզբունքով են արված մի շարք փորագրանկարներ, որոնց կենտրոնում պատկերված է Թափառող հրեան՝ կոշկակարի կերպարով, իսկ ետնախորքում՝ նրա կյանքի պատմությունը (նկ. 3, 4): Հիմնականում ներկայացվում է Ահասֆերը՝ կոշկակարի իր կրպակի դիմաց Քրիստոսին կշտամբելիս: Հեռվում՝ Գողգոթայի բարձունքին, երևում են երկու ավազակների խաչափայտերը, երրորդը Փրկչին է լինելու (որոշ փորագրանկարներում երրորդ խաչն արդեն այնտեղ է):



Թափառական հրեան և նրա կյանքի դրվագները



Նկ. 3 Փորագրանկար, 1773 թ.,
Փարիզ

Նկ. 4 Փորագրանկար, 1784 թ.,
Ավինյոն

Փորագրանկարների վերջին դրվագում տեսնում ենք հրեայի հանդիպումը երկու անցորդների հետ, որոնցից հարցնում է, թե երբ է գալու Նա, Ով պետք է գա: Այս ընթացքով նա ընդառաջ է գնում հարուցյալ Հիսուսին, Ում գալստյամբ ավարտվելու էին իր թափառումները:

Բոլոր պատկերներում հրեայի կերպարը միանման է. երկարաձմազեր ու մորուք, կոշկակարի հագուստ, գլխարկ ու զոզնոց և հաստ փայտից գավազան ու երկարաճիտ կոշիկներ, որոնք, միևնույնն է, անընդհատ մաշվում են անվերջ քայլելուց:

Թափառական հրեայի պատկերումը նոր թափ է առնում ֆրանսիացի գրող Էժեն Սյուի «Թափառական հրեան» վեպի³ 1845 թ. տպագրությունից հետո, երբ այս հերոսին սկսում են պատկերել վեպի տարբեր հրատարակությունների տիտղոսաթերթերին (նկ. 5, 6):



Նկ. 5, Նկ. 6 Էժեն Սյուի «Թափառական հրեան» վեպի գրքերի տիտղոսաթերթը և կազմը

Ժամանակի մրրիկներին հակառակ ընթացող կերպարը ներկայացվում է իր ստվերի արտապատկերմամբ, ինչը զուգահեռվում է Կայենին (Woolf, 2018: 22), որն աստվածային անեծքով աշխարհում շրջում է ստվերի պես:


³ Էժեն Սյուի «Թափառական հրեան» վեպը 1857 թ. առաջին անգամ հայերեն է թարգմանել և Մոսկվայում տպագրել Միքայել Նալբանդյանը (Դարոնյան, 1983: 91):

Այնուամենայնիվ, Թափառական հրեայի առասպելն իր պատկերագրական և կատարողական բարձրակետին է հասնում 19-րդ դարի նշանավոր փորագրանկարիչ Գյուստավ Դորեի տասներկու նկարագարումներից բաղկացած շարքում: Ֆրանսիացի հանճարեղ վարպետի ձեռքով դիտողի համար կենդանանում է թափառողի կյանքի ողջ ընթացքը, և փոխանցվում են նրա մարդկային ապրումները, հույզերն ու զղջումը:

Դորեի փորագրանկարներում Թափառական հրեան հայտնվում է տարբեր դարաշրջաններում ու քաղաքներում, տեսնում է պատերազմներ, աղետներ, ողբերգություններ: Այդկերպ հեղինակը ցույց է տալիս ոչ միայն հերոսի անձնական տառապանքը, այլև միահյուսում է այն ողջ մարդկության տառապանքին, որը նա դարեդար ստիպված է տեսնել: Այսպիսով՝ Թափառական հրեան այլևս այն միանշանակ բացասական կերպարը չէ, այլ ուրիշներին կարեկցող, և ինքը նույնպես կարեկցանքի արժանի մեկն է:

Շարքի առաջին փորագրանկարով սկսվում է հրեայի անվերջանալի ճանապարհը Խաչելության պահից (նկ. 7): Քրիստոսի մարմինը՝ լուսաշող սպիտակով, ներկայանում է որպես փրկության խորհրդանիշ, մինչդեռ հերոսի մուգ շորերն ընդգծում են նրա դատապարտվածությունը: Այդպիսով՝ մեկը խորհրդանիշն է հավերժական փրկության, իսկ մյուսը՝ հավիտենական անեծքի:

Մթամած երկինքը, ժայռերը, թախանձախիտ բնությունը ռիթմ, լարվածություն և շարժունություն են հաղորդում առաջին տեսարանին, որին հակադրվում է շարքի վերջին փորագրանկարը, որում ԱհաՖերը անշարժ է ներկայացված. այդտեղ Ահեղ դատաստանի օրն է՝ հրեայի դեգերումների վերջը (նկ. 8):



Նկ. 7 Գյուստավ Դորե,
«Թափառական հրեայի լեգենդը»,
առաջին փորագրանկար, 1857 թ.



Նկ. 8 Գյուստավ Դորե,
«Թափառական հրեայի լեգենդը»,
վերջին փորագրանկար, 1857 թ.

Կենտրոնական դիրքում ներկայացված է Թափառական հրեան՝ ուժասպառ նստած մի քարի վրա, գրեթե մինչ ոտքերը երկարած մորուքով և մաշված հագուստով։ Նրա հայացքն ուղղված է վեր՝ շեփորահարող հրեշտակին, որն ազդարարում է Տիրոջ Որդու գալուստը։ Նրա շուրջը հավաքված են տարբեր մարդիկ, կենդանիներ, հրեշավոր արարածներ և երկնային հրեշտակներ, սակայն նա անհաղորդ է այդ ամենին, անգամ դեմքին մեղմ ժպիտ է նշմարվում, քանի որ վերջապես եկել է սպասված պահը։

Երկնային լույսի շողերը և դժոխքի կրակի բոցերը լուսավորում են խավար միջավայրը՝ ստեղծելով երկու աշխարհների միջև բախում։

Ավետիք Իսահակյանի «Շիդհարը» լեգենդը

Թափառական հրեայի մասին միջնադարյան պատկերացումներն իրենց արտահայտությունն են գտել նաև հայկական մի շարք ավանդություններում, համաձայն որոնց՝ նա պարբերաբար «հայտնվել է» Հայաստանում, այդ թվում՝ Ավետիք Իսահակյանի հարազատ Ղա-

զարապատում: Վարպետն իր հուշերում գրում է, որ Թափառական հրեան երևացել է Հոռոմ գյուղի հովիվներին և կաթ խնդրել նրանցից (Իսահակյան, 1951: 118):

Եվրոպական գրականությանը և մշակույթին քաջաճանոթ Իսահակյանը, որը նաև մանկության տարիներին բազմիցս լսել էր այդ ավանդագրույցը (Մուշեղյան, 1983: 75), հետագայում Ահասֆերի եվրոպական կերպարի և Թափառական հրեայի՝ հայկական միջավայրի պատկերացումների հիման վրա ստեղծում է դրանց համադրական տիպը:

Վարպետն այս լեգենդի գրական մշակման վրա աշխատել է 1907 թվականից: Առաջին տարբերակը լույս է տեսել 1908 թ.՝ «Ահասֆեր» վերնագրով, երկրորդը՝ 1911-ին՝ «Թափառական հրեան» անվամբ, իսկ երրորդը՝ 1927 թ.՝ «Շիդհարը» վերտառությամբ (Մկրտումյան 2017: 234):

Ահասֆերի համար ասվում է, որ նա երկրի վրա իր շարունակական հարկադրական պտույտների ընթացքում ամեն անգամ, երբ անցնում է տարածական որևէ կետով, ականատես է լինում զգալի փոփոխությունների, որ կատարել է ժամանակը: Եվ 20-րդ դարում ստեղծված մի շարք կտավներ, թվում է, թե պատկերային լեզվով արտահայտությունն են իսահակյանական տողերի:

Թափառական Շիդհարը վեր բարձրացրեց մտազբաղ աչքերը, որոնց վրա արևակեզ ճակատի խորունկ խորշումներն էին իջել⁴:

Եվ տեսավ զարմանքով, որ ա'յն վաղեմի ծանոթ ծովը, որի շառաչուն ափերով ինքն անցել էր մի քանի անգամ իր դարավոր թափառումների անկայան ընթացքին, հիմա մի ծարավուր և տառապալկուր անապար է դառել:

Եվ տեսավ, որ նախկին ծովի կանաչ ալիքների փոխարեն, որոնց վրա նավերն էին օրորվում փեղուրի պես, - հիմա ավազի դեղին ալիքներն են գալարվում անապատային առյուծի բաշերի պես (նկ.9):

Եվ նավերի փոխարեն դանդաղ քայլում է քարավանը խուլ դռանցումով:

⁴ Լեգենդն ամբողջությամբ՝ (Իսահակյան, 2014: 114-117):

Երկաթեղեն ուրներով մուրեցավ նա քարավանի պեղին և խո-
լածայն հարցրեց.

- Քանի՞ ժամանակ է, որ այստեղ անապատ է գոյացել:

- Իսեղճ ծերուկ, խելքդ թոցրել ես, - բարձրաձայն ծիծաղեց
առաջնորդը:

- Ճիշտ եմ ասում, անծանոթ բարեկամս, փարիներ առաջ, երբ
անցա, այստեղ մի անեգր ծով կար, իսկ հիմա - անջուր անապատ:

Եվ նրա ահազդեցիկ ձայնը գալիս էր դարերի մոայլ խորքերից:

- Սակայն քո աչքերից չի երևու՛մ, թե դու խելագար ես: Բայց
ի՞նչ անհասկանալի բաներ ես ասում: Մեր պապերի պապերի պապե-
րը անցել են այս տեղով, ու նրանցից էլ շա՛տ առաջ շատերն են ան-
ցել, իսկ այս անապատն աշխարհի սկզբից կար ու կմնա...

Երազի մեջ ես, ծերուկ, երազի մեջ:

Մի դաժան ծաղր կծկվեց Շիրհարի սևաթույր շրթների անկյու-
նում: Եվ նորից քայլեց առաջ:



Նկ. 9 Ֆելիքս Նուսրաում (1904–1944), «Թափառական հրեան», 1939 թ.

Անցան դարեր, նորից դարեր:

Թափառական Շիդհարի հարյուր անգամ երկիրը չափող ուրնե-
րը մի անգամ վերստին ուղղվեցին դեպի անապարը:

Երբ մոտեցավ ծանոթ վայրի սահմաններին՝ տեսավ, որ երեկ-
վա ամայի անապարտում հիմա մի մարդաշատ քաղաք է եռում (Նկ.10):

Մոտեցավ քաղաքի մեծ դռանը և միամտորեն հարցրեց դռնա-
պանին.

- Ի՞նչ շուտ շինեցիք այս քաղաքը:

Դռնապանը շատ տարօրինակ գտավ այս հարցը:


- Ինչպե՞ս թե... շինեցինք: Վաղո՞ւց, վաղո՞ւց գոյություն ունի
այս քաղաքը. մեր պապերի պապերի պապերը չգիտեն անգամ, թե
ո՞վ և ե՞րբ ձգեց այս քաղաքի հիմերը: Այս քաղաքն այնքան հին է, որ-
քան աշխարհը:

...

Նորից մի դաժան ծաղր գալարվեց՝ անապարի օձի պես՝ Շիդ-
հարի մթագին շրթների վրա.

«Ա՛յն թռչող վայրկյանը, որ մարդիկ կյանք են անվանում, հա-
վերժական է թվում այս խեղճերին... Սակայն, ո՞վ փրկարար պատ-
րանք... Իրենց խխունջից տիեզերական օվկիանի խորհուրդներն են
լուծում և օրենքներ են սահմանում անհու-
նին և անսահմանին... Անապարի վրայից
սահող ամայի սրվերից ավելի ստահող է
ձեր էությունը... Սակայն տեսնենք վաղը
ի՞նչ է լինելու...»:

Եվ վերստին քայլեց անդուլ դարերի
թափառականը:



Նկ. 10 Ուդո Քեփլեր (1872–1956),
«Թափառական հրեան», 1901 թ.

Անցան դարեր, նորից դարեր, և եկավ վաղը:

Հիշեց Շիդհարը վաղեմի քաղաքը և ուզեց այցելել նրան:

Երբ հասավ նրա սահմաններին՝ տեսավ, որ քաղաքի տեղը հիմա փոփում է մի դաշտավայր՝ ծաղկավետր և գարնանագեղ (Նկ. 11): Գետակի ափին պարում էին ու երգում նորաբողոքոջ աղջիկները: Եվ հովիվը արածացնում էր խաշների հոտը սրնգի դայլայների տակ:

- Ո՛ր գնաց այստեղից քաղաքը, - հարցրեց նա հովիվին:

- Ի՞նչ քաղաք, - ապշեց հովիվը:

- Տարիներ առաջ իսկ և իսկ այս կողմերն էի. մի մարդաշատ քաղաք էր եղում այստեղ: Նրա մասին է խոսքս...

Հովիվը քար - կտրած նայում էր Շիդհարին:

- Ե՛րբ առաջ եկավ այս դաշտը, - հարցրեց Շիդհարը:

- Ի՞նչ սարսափելի բաներ ես ասում, ես քեզ չեմ հասկանում... մեր պապերի պապերի պապերը, և էլի առաջ, այստեղ իրենց հուրերն են արածացրել: Այս դաշտը կար աշխարհի սկզբից և կմնա ...

Հինավուրց թափառականի մոայլ շրթները նորից գալարվեցին. և արգահատանքի մի հայացք, դաշույնի պես, շողաց նրա աչքերում:

«Եղկելի մարդիկ, երեկը նրանց համար գոյություն չունի, այսօրն է նրանց համար միակ իրականը... Երգում են և պարում, և չգիտեն, որ իրենց ուրների տակի երեկվա գերեզմանը վաղը իրենց գերեզմանն է լինելու...»:



Եվ նորից քայլեց Շիդհարը: Ձյունաթույր մազերը ալեկոծվում էին նրա մթին ճակատի վրա: Քայլում էր և հոգու խորքում դառնագին խորհում մարդու միամտության և նրա գոյության ակնթարթի վրա և բոլոր իրերի գահավեժ հոսման վրա ...

Նկ. 11 Ֆերդինանդ Հոդլեր (1853–1918),
«Ահասֆեր», մոտ 1910 թ.

Հավերժական այս թափառողի մասին գրում է նաև Ավետիս Ահարոնյանը՝ ներկայացնելով իր վաճառելիք իրերն ավանակի վրա բարձած շրջիկ մանրավաճառի՝ ժողովրդական մտածողության մեջ ընդհանրացած բնորոշ կերպարով: Այն հետևյալ ձևով է տպավորվել գրողի մանկության տարիներից եկող վերհուշ-պատկերներում. «Մեկն ասում էր, թե ջիուղը երկար, մինչև ծնկները հասնող միրուք ունի, որ քայլելիս հավաքում է ձեռքում պահում: Մի ուրիշը հավատացնում էր, թե նա կարճահասակ մարդ է, ցանցառ ու տգեղ միրուքով, նման մեր գյուղի ժամհար Սողոմոնին: Ոմանք պնդում էին, թե նա երբեք ոտքով չի շրջում և միշտ էշ է հեծնած: Ուրիշները՝ թե էշ չունի, խեղճ ու կրակ թափառական է և գավազանը ձեռքին անցնում է աշխարհից աշխարհ ու իր սև օրն է քաշում» (Ահարոնյան, 1984: 264):

Ահարոնյանի այս նկարագրությունը որոշակի զուգահեռ է գծում Մարկ Շագալի՝ Թափառական հրեայի պատկերներից մեկի



հետ, որում հրեայի կողքին նրա ավանակն է (Նկ. 12): Շագալը, ինքը ևս հրեա լինելով, բազմիցս անդրադարձել է Թափառական հրեայի կերպարին՝ այդ կերպ ներկայացնելով նաև իր ժողովրդի վտարանդի ճակատագիրը:

Նկ. 12 Մարկ Շագալ (1887-1985),
«Թափառական հրեան», 1923 – 1925 թթ.

Եզրակացություն

Այսպիսով՝ Թափառական հրեայի գրականագիտական և արվեստաբանական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս կերպարը, դուրս գալով իր միջնադարյան նախաստեղծ գաղափարից, վերածվել է համամարդկային գոյաբանական խորհրդանիշի: Նա

միաժամանակ արտացոլում է մեղքի և պատժի գաղափարը, աշխարհի փոփոխականությունը, մարդկային վախերը և փրկության հույսը:

Թափառական հրեայի արտաքինը հստակ ճանաչելի է. նա ունի երկար մորուք և մազեր, ցնցոտի հագուստ, անդադար քայլելուց արդեն մաշված կոշիկներ և պանդուխտի փայտյա հաստ գավազան: Հետաքրքրական է, որ յուրաքանչյուր ժամանակաշրջանում հրեային պատկերել են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ հանդերձներով: Վաղ շրջանի մանրանկարներում և փորագրանկարներում նրա դեմքը հույզեր չի արտահայտում, նա անտարբեր և անհաղորդ մի կերպար է, որը պարզապես հնազանդորեն ենթարկված է իր ճակատագրին: Ավելի ուշ շրջանի ստեղծագործություններում նա ձեռք է բերում անհատական դիմագիծ, հույզեր և ապրումներ:

Այսպիսով՝ Թափառական հրեայի լեգենդը դարերի ընթացքում վերափոխվել է՝ դառնալով ոչ միայն եվրոպական միջնադարյան բանահյուսական պատում, այլև համաշխարհային մշակույթի և արվեստի կարևորագույն կերպարներից մեկը, որը շարունակ նոր իմաստներ է գտնում տարբեր ազգային ու մշակութային միջավայրերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ահարոնյան Ա.**, Երկերի լիակատար ժողովածու, հտ. Թ, Թեհրան, 1984:
2. **Դարոնյան Ս.**, Մ. Նալբանդյանը և Ստ. Ոսկանյանը // Պատմա-բանասիրական հանդես, 1983, 1, էջ 76-92:
3. **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 4-րդ, Երևան, 1951:
4. **Իսահակյան Ավ.**, Երկերի ժողովածու, հտ. 5, Երևան, 2014:
5. **Մկրտումյան Ա.**, Արևելքից արևմուտք. Թափառական հին սյուժեն համամարդկային նոր ընդհանրացմամբ // Օտար լեզուները բարձրագույն դպրոց, 2017, 1 (22), էջ 234-244:
6. **Մուշեղյան Ա.**, Իսահակյան Ավ. վաղ տարիներ (1875-1898), Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1983, 294 էջ:
7. Еврейская энциклопедия, т. 6-ой, С. Петербург, «Издательства Бронгауз-Ефронъ», 1912, 964 с.
8. Мифы народов мира, т. 1-й, Москва, Издательство «Советская Энциклопедия», 1980, 1148 с.

9. **Anderson G.**, The Legend of the Wandering Jew, Providence, Brown University Press, 1965, 489 p.
10. **Cohen R.**, The "Wandering Jew" from Medieval Legend to Modern Metaphor, in Barbara Kirshenblatt-Gimblett and Jonathan Karp (eds), The Art of Being Jewish in Modern Times, Philadelphia, University of Pennsylvania Press, 2008, pp. 147-175.
11. **Daube D.**, Ahasver // The Jewish Quarterly Review, 1955, 45 (3), pp. 243–244.
12. **Grace J.**, Performing Faith: The Interwoven Illuminations of the De Brailes, The University of Texas at Austin, 2018, 129 p.
13. **Lampert-Weissig L.**, The Time of the Wandering Jew in the Chronica Majora and the De Brailes hours // Philological quarterly, 2017, vol. 96 pp. 171-202.
14. **Lewis S.**, The Art of Matthew Paris in the Chronica Majora, Berkeley, University of California Press, 1987, 576 p.
15. **Smith K.**, Walters Ms. W.106, Bible pictures by William de Brailes // The Digital Walters, 2012, pp. 1-18.
16. **Woolf M.**, The Wandering Jew // Frontiers: The Interdisciplinary Journal of Study Abroad, 2018, Vol. 30 No. 1, pp 20-32.
17. **Beyer J.**, Jürgen und der Ewige Jude. Ein lebender Heiliger wird unsterblich // Arv. Nordic Yearbook of Folklore, 2008, N 64, pp. 125-140.
18. Flores Historiarum (in Latin), London, H.M. Stationery Office, 1890, 559 p.
19. **Matthew Paris**, Chronica Majora (in Latin), ed. H. R. Luard, London, 1880, 748 p.
20. **Roger of Wendover**, De Joseph, qui ultimum Christi adventum adhuc vivus exspectat (in Latin), London, 1849, 614 p.

REFERENCES

1. **Aharonyan A.**, Erkeri liakatar zhoghovadzu [Complete Works], vol. 9, Tehran, 1984.
2. **Daronyan S.**, M. Nalbandyany ev St. Voskanyany [M. Nalbandyan and St. Voskanyan] // Patma-banasirakan handes [Historical-Philological Journal], 1983, 1, pp. 76-92.
3. **Isahakyan Av.**, Erkeri zhoghovadzu [Complete Works], vol. 4, Yerevan, 1951.

4. **Isahakyan Av.**, Erkeri liakatar zhoghovadzu [Complete Works], vol. 5, Yerevan, 2014.
5. **Mkrtumyan A.**, Arevelik' arevmutk'. T'aparakan hin syuzhen hamamardkayin nor undhanrac'mb [From East to West: The Ancient Wandering Motif with a New Universal Generalization] // Otar lezuineri bardzraguyn dproc [Foreign Languages in Higher Education], 2017, 1 (22), pp. 234-244.
6. **Musheghyan A.**, Isahakyan Av. Vagh t'ariner (1875–1898) [Avetik Isahakyan. Early Years (1875–1898)], Yerevan, "Sovetakan grogh" hrat. [Soviet Writer publ.], 1983, 294 p.
7. Yevreiskaya entsiklopediya [Jewish Encyclopedia], vol. 6, St. Petersburg, "Izdatel'stva Brongauz-Yephron" [Publishing House Brockhaus and Efron], 1912, 964 p.
8. Mify narodov mira [Myths of the Peoples of the World], vol. 1, Moscow, "Sovetskaya Entsiklopediya" publ., 1980, 1148 p.
9. **Anderson G.**, The Legend of the Wandering Jew, Providence, Brown University Press, 1965, 489 p.
10. **Cohen R.**, The "Wandering Jew" from Medieval Legend to Modern Metaphor, in Barbara Kirshenblatt-Gimblett and Jonathan Karp (eds), The Art of Being Jewish in Modern Times, Philadelphia, University of Pennsylvania Press, 2008, pp. 147-175.
11. **Daube D.**, Ahasver // The Jewish Quarterly Review, 1955, 45 (3), pp. 243–244.
12. **Grace J.**, Performing Faith: The Interwoven Illuminations of the De Brailles, The University of Texas at Austin, 2018, 129 p.
13. **Lampert-Weissig L.**, The Time of the Wandering Jew in the Chronica Majora and the De Brailles hours // Philological quarterly, 2017, vol. 96 pp. 171-202.
14. **Lewis S.**, The Art of Matthew Paris in the Chronica Majora, Berkeley, University of California Press, 1987, 576 p.
15. **Smith K.**, Walters Ms. W.106, Bible pictures by William de Brailles // The Digital Walters, 2012, pp. 1-18.
16. **Woolf M.**, The Wandering Jew // Frontiers: The Interdisciplinary Journal of Study Abroad, 2018, Vol. 30 No. 1, pp 20-32.
17. **Beyer J.**, Jürgen und der Ewige Jude. Ein lebender Heiliger wird unsterblich // Arv. Nordic Yearbook of Folklore, 2008, N 64, pp. 125-140.

18. Flores Historiarum (in Latin), London, H.M. Stationery Office, 1890, 559 p.
19. **Matthew Paris**, Chronica Majora (in Latin), ed. H. R. Luard, London, 1880, 748 p.
20. **Roger of Wendover**, De Joseph, qui ultimum Christi adventum adhuc vivus expectat (in Latin), London, 1849, 614 p.